Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021: «Նոյեմբերյանում կանանց և երիտասարդների համայնքային կենտրոնի ստեղծման» ծրագրի եզրափակիչ արարողություն

2022թ. հունիսի 15-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմի <<Պապոնց տուն>>սոցիալ-կրթական կենտրոնում տեղի ունեցավ «Նոյեմբերյանում կանանց և երիտասարդների համայնքային կենտրոնի ստեղծման» մինչև 70,955 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (ՖՏ 2021) համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Հայ առաքելական եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը, Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանը, ինչպես նաև տարբեր շահառուներ տեղական ՀԿ-ներից, հարևան համայնքապետարաններից, ծնողներ/աշակերտներ:

«Նոյեմբերյանում կանանց և երիտասարդների համայնքային կենտրոնի ստեղծման» ծրագրի նպատակն է եղել Նոյեմբերյան քաղաքում կառուցել նոր համայնքային սոցիալ-կրթական կենտրոն, որը կծառայի քաղաքի և հարակից գյուղերի մանկահասակ և մեծահասակ բնակչությանը: Ծրագիրը ունենալու է շարունակական ազդեցություն բնակիչների շրջանում: Մասնավորապես, կենտրոնը օգնելու է շահառուներին բարելավել իրենց կյանքի որակը և նպաստել տնտեսական անկախությանը՝ դրանով իսկ օժանդակելով տարածաշրջանային ներառական և կայուն զարգացմանը:

Նորաստեղծ «Պապոնց տուն» կենտրոնը

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Երեխաների պարային բեմադրություն

ODA ցուցանակի բացումը